

ՆՈՒԻՐՈՒԱԾ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՅԻՆ

Շարաթ 8 Հոկտեմբերի երեկոյան, Հոնտոնի Գալուստ Կիւլպէնկեան սրահին մէջ տեղի ունեցաւ Ղարաբաղի Զօրակցութեան Յանձնախումբի երկըրորդ հրապարակային ձեռնարկը: Կիւլպէնկեան սրահը լնցուած էր լոնտոնահայութեամբ, ներկայ էր հայոց բարեկամ, հայկական դատին քաջամտ անգլիացի պատմաբան Քրիստոֆըր Ուոլըրը, հիւրաբար Հոնտոն գտնուող իրաւահայոց Առաջնորդ Աւագ Սրբազանը և բրիտանահայոց Առաջնորդ Եղիշէ Սրբազանը:

Երեկոյի բացումը կատարեց Յանձնախումբի գործոն անդամներէն Պր. Կարպիս Եսայեան, հակիրճ ժանթութիւններ տալով Ղարաբաղի Զօրակցութեան Յանձնախումբի աշխատանքներուն շուրջ: Ապա Տիկին Սարգիսեան տեղեկութիւններ տուաւ վերջին ամիսներուն Ղարաբաղի և Հայաստանի մէջ եղած իրադարձութիւններուն, ինչպէս Ղարաբաղի մէջ հայ աշակերտներու վրայ կատարուած յարձակումը, Երեւանի ցոյցերն ու գործադուլները: Տիկին Սարգիսեան դարաբաղեան իրադարձութիւններուն շարքին դասեց նոյնպէս՝ Պարոյր Հայրիկեանի խորհրդային քաղաքացիութենէն զրկուիլն ու արտահանումը: Ան կարգացնաւ լիբանանի երեմ կուսակցութիւններու (Ռ.Ա.Կ., Ս.Դ.Է. և Հ.Յ.Դ.) շրջանային Մարմիններու միացեալ կոչը Ղարաբաղի անդառնումը: Նոյն յանձնախումբի անդամ Տոթթ. Սահակեան նաև նշոյթ ունեցաւ մեկնաբանելով Երեւանի մէջ գոյութիւն ունեցող յուզումները, ժանթացուց «Ղարաբաղի» Կոմիտէի անդամները իրենց անուններով ու մասնագիտութիւններով:

Ամենայնպէս կանխարգելիչ ընթացքին Օր. Արդա Յովհաննիսեանի պատրաստած նշոյթն էր: Օր. Յովհաննիսեան մասնագիտութեամբ իրաւաբան ըլլալով, Ղարաբաղեան հարցին մօտեցաւ ոչ զգացական զեղումներով. անոր նշոյթը կշռադատուած էր ու համակողմանի: Եւրոյթ ունեցող իրաւաբանը յայտնեց թէ ըստ խորհրդային սահմանադրութեան հանրապետութիւններու միջեւ կատարուելիք սահմանային փոփոխութիւններու համար, անհրաժեշտ է որ համաձայնի շահաբոխը երկու հանրապետութիւնները: Ղարաբաղի պարագային Ատրպէյճանի համաձայնութիւնը անհրաժեշտութիւն է իրաւական գնտեսի վրայ: Եթէ Կեդրոնական կառավարութիւնը ուզէ նոյնիսկ, իրաւունք չունի սահմանային փոփոխութիւններ մտցնելու: Օր. Յովհաննիսեան ընդգծեց սակայն, թէ սահմանադրութիւնները ժողովուրդին համար են, ոչ թէ ժողովուրդը սահմանադրութեան համար: Արդ, եթէ սահմանադրութիւնը Ղարաբաղեան արդար հարցը լուծելու համար դռները փակած է, կարելի է փոփոխութիւն մտցնել սահմանադրութեան մէջ, գոհացնելու հայ ժողովուրդը և պատմական իրականութիւնները յարգելու համար:

Երեկոյի ընթացքին հետաբոլորական նշոյթ ունեցաւ նաև Պր. Տորճ Բիրտճեանը, որը նոր վերադարձած էր Երե-

ւանէն: Պր. Բիրտճեան իր ականատեսի վկայութիւնները տուաւ Երեւանի ցոյցերուն ու պատմեց իր այն հանդիպումներու մասին, զոր ունեցած է Հայաստանի մտաւորականութեան, ուսանողութեան և այլ պատասխանատու անձնաւորութիւններու հետ: Ան գոհացուց ներկաներուն մեծամասնութիւնը:

Ղարաբաղի Զօրակցութեան Յանձնախումբի անդամները ցուցադրեցին նաև շուրջ տաս դրպէանոց վիտէօ ժապաւէն մը, ուր երեկոյան նկարահանման մը ժամանակ նշոյթ կ'ունենար «Ղարաբաղի» Կոմիտէի մարտնչութիւնը Վազգէն Մանուկեանը, շարադրելով Կոմիտէի բազմաթիւ կէտերէ բաղկացած պահանջները:

Պր. Կարպիս Եսայեան կարգացնաւ յանձնախումբի ուղարկած վերջին նամակ-հեռագիրը, ուր կը դրսևերուէին որոշ ձեւակերպուած առաջարկութիւններ ղարաբաղեան վերջին իրադարձութիւններու կապակցութեամբ:

Երեկոն փակուելէ առաջ առիթ տրուեցաւ ներկաներուն, որպէսզի հարցեր ուղղեն նշոյթ ունեցողներուն, կամ Յանձնախումբի անդամներուն: Հարցադրումներ կատարողներէն ոմանք յայտնեցին այն մտաւայնութիւնը, թէ Յանձնախումբը կը դրսևերուէ որոշ կուսակցութեան մը հակումները, իր գործելակերպին մէջ, մատնանշելով սրահի մուտքին տեղադրուած մամուլու և հրատարակութիւնները, որոնցմէ ոմանք միակողմանի բնոյթ ունէին: Այլ հարցադրում մը մտաւայնութիւն յայտնեց շմտածուած գործելակերպերու շուրջ, որոնք կրնան Ղարաբաղեան շարժումին վնաս հասցնել: Յանձնախումբի անդամ մը պատասխանելով վերջին հարցին յայտնեց թէ իրենք երեւոյթները չեն մեկնաբաներ, այլ կուտան միայն փաստերը, ներկաներուն կը մնայ ներկայացուցութիւններու յանգիլ: Յանձնախումբի անդամներուն նկատողութեան յանձնեց ուրիշ ներկայ մը, թէ միջ առաջ կարգացուած կուսակցութիւններու միացեալ յայտարարութիւնը միտանի ամսուայ վաղեմիութիւն ունի, բոլորովին վերջերս մամուլին մէջ լոյս տեսաւ հայ երեմ կուսակցութիւններու Կեդրոնական /Գերագոյն/ Մարմիններու միացեալ յայտարարութիւնը, որը ամբողջացում է նախկին յայտարարութեան, առաւել խորացուած ու շրջա-հայեաց:

Ղարաբաղի Զօրակցութեան իրաւանշիր շարժում գնահատելի ու քաջալերելի է սփիւռքի մէջ: Հոնտոնի Զօրակցական յանձնախումբը նաև առայժմ թէև համեստ, սակայն գաղութի մէջ շնորհաժել գործ կը կատարէ: Սակայն անհրաժեշտ է շարժումը առաջնորդել այնպէս, որ զգայնութիւններ չգրգռեն: Նպատակը մնայ մի միայն բոլորիս համար սիրելի Ղարաբաղը: Ղարաբաղեան շարժումը Հայաստանի և Ղարաբաղի մէջ միասնականութիւն ստեղծեց սփիւռքահայութեան մէջ, հարցի կապակցութեամբ: